ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2016թ. թիվ 486-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի 1-ին մասով, 1.12-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով զեկուցագրերը և քաղաքացիների դիմումները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից աջակցության նպատակով տասնչորս քաղաքացու հատկացնել 170000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 16
ք.Վանաձոր